01/10.1/13740-10
2010-11-09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հանրակրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Միասնական դպրոցական համազգեստի պարտադրումը կարող է դպրոցում նպաստել սոցիալական անհավասարության դրսևորման մեղմացմանը, սակայն ներկա պայմաններում օրենքի մակարդակով գաղափարի իրականացումը կառաջացնի մի քանի լուրջ խնդիրներ՝

1) նախագծի ընդունման դեպքում շուրջ 400000 սովորողներից յուրաքանչյուրի համար կառաջանա երկու սեզոնային և մեկ կամ երկու մարզական համազգեստի պարտադիր ձեռքբերման պահանջ։ Դպրոցները պետք է նախահաշվում նախատեսեն լրացուցիչ գումար՝ սոցիալապես անապահով սովորողներին այդ հարցում օգնելու համար (10-15 տոկոս), որը նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության 2011-2013 թվականների պետական

միջնաժամկետ ծախսերի ծրագրով և «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով.

2) հասարակության մեջ դեռևս ձևավորված չէ միասնական մոտեցում դպրոցական համազգեստի ներդրման գաղափարի նկատմամբ: Համազգեստի կիրառման գաղափարը կարող է կյանքի կոչվել հաստատության կառավարման լիազորված մարմնի կողմից՝ հաստատության կանոնադրությամբ կամ ներքին կարգապահական կանոններով: Այդ դեպքում սոցիալապես անապահով սովորողներին աջակցությունը կարող է ցուցաբերվել ձեռնարկատիրական կամ կանոնադրությամբ չարգելված այլ եղանակներով ստացված միջոցների հաշվին.

3) գյուղական բնակավայրերի միակ դպրոցում սովորող աշակերտների համազգեստի պարտադիր ներդրման պահանջը ծնողին կզրկի այդ իմաստով որևէ ընտրության հնարավորությունից:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-996-06.10.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հանրակրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Հանրակրթության մասինե Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի վերջը լրացնել հետեւյալ բովանդակությանբ 11-րդ կետով «11 հանրակրթական, մասնագիտացված հանրակրթական եւ հատուկ հանրակրթական դպրոցներում սովորողները կրում են պատրաստի կամ ինքնուրույն կարված համապատասխան սեզոնային համազգեստ՝ այդ թվում ֆիզկուլտուրայի դասերին հաճախելու համար սպորտային համազգեստ։ Այդ համազգեստների ձեւը ըստ կրթական աստիճանի լիազորված պետական մարմնի ներկայացմամբ, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՕՐԻՆԱԳԾԻ

Օրինագծի ընդունումը պայմանավորված է սովորողների միջեւ խտրականությունը մեղմացնելու անհրաժեշտությամբ։ Դպրոցը համազգեստավորելու միտումն առկա է այնպիսի երկրում ինչպիսին Շվեյցարիան է։